

# Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

## Հ Ա Ն Պ Ի Ս Ա Ր Ա Ն

### Պ Ի Ո Ս Թ

Տարույս փետրուար ամսոյն եօթնե-  
րորդ օրն էր :

Դեռ քիչ օր առաջ կայսերաց քաղա-  
քին մէջ պատահած տարածամահ մը՝  
բոլոր քաղաքական աշխարհի ուշա-  
դրութիւնը գրաւեր էր :

Դեռ ամենքն անոր տպաւորութիւն  
զգածուած, հետեանօքն զբաղեալ էին,  
և ահա հեռագիրն՝ նոյն քաղաքէն,  
ուրիշ անակընկալ մահ մըն ալ կը գու-  
ժէր :

Սրբազան հայրապետն Պիոս Թ ան-  
մահախառն փառօք լրացուցած երկար  
կեանքէ մը ետքը՝ իր հոգին Աստուծոյ  
կը յանձնէր :

Այն տխուր լրոյն՝ բոլոր ուղղափառ  
աշխարհ արտասուաց արձագանգով մը  
պատասխան տալով, կը յայտնէր իր  
սէրն, մեծարանքն ու զարմանքը : Ամեն-  
քը կը խոնարհէին այն գերեզմանին  
վրայ, հանգիստ ու անմահութիւն մաղ-  
թելով իրենց Հօրը :

Քաղաքական տեսութեամբ կամ կրօ-  
նական համոզմամբ իրենց համամիտ  
չեղողք ալ, միաձայն կը դտնուէին 'ի  
գրուատեղ և 'ի մեծարել անոր յիշա-  
տակը :

« Մեծ կերպարանք մ'ալ, — կ'ըսէր  
իրենց բերան եղող օրագրաց մէկը, —  
պակսեցաւ աշխարհիս տեսարանին վը-  
րայէն . . . Պիոս Թ կը համառօտէր յին-  
քեան ամբողջ շրջան մը պատմութեան .  
և թէպէտ իր անուամբը տրուած է ա-  
մենէն աւելի ռիսերիմ պատերազմաց մէ-  
կը, և անոր հարուածոցը տակ ընկնող-  
ներուն մէջ մենք եղած ենք առաջին ,  
սակայն անիկայ պիտի չկարենայ իր  
յաղթանակաց մեծութիւնը նուազեցը-  
նել մեր մտաց առջև . . . Իր մահը բոլոր  
աշխարհի համար կարևորութիւն ունե-  
ցող գէպք մըն է . վասն զի ուր ուղղա-  
փառք կան՝ այն տեղ իրեն կամացը ե-  
ռանդուն հպատակաց ամփոփ բազմու-  
թիւն մը. և որչափ ժամանակին այլքն  
անոնց վրայ կը խստանային, աշխար-  
հական իշխանութեան ստուերն ալ ի-  
րենցմէ յափշտակելով, այնչափ աւելի  
ուժով կ'իշխէր իրեն հաւատարիմ մնա-  
ցող սրտերուն վրայ » :

Ուրիշ մ'ալ կը գրէր .

« Հասանք այն նշանաւոր վայրկենին՝  
յորում Պիոս Թ պատմութեան վերա-  
բերեալ անուն մըն է : Ուղղափառ աշ-  
խարհի սգոյն առջև՝ արժան է որ վա-

րակինք այն տրտմութեամբ և մեծա-  
րանքով, զոր պարտական ենք անոնց՝ որ  
աշխարհի տեսարանէն անհետանալով,  
խորունկ հետք մը կը ձգեն իրենց և  
տեւէն այն դիպուածներով՝ որոնց ա-  
ւելի պատճառ քան վկայք եղան, և ա-  
նոնց հետեւանք եղող արգասեքք :

« Պիոսի թ կենաց մէջ պատմութեան  
մեծ շրջաններէն մէկը կ'ամփոփուի : . .  
ինչ կերպով ալ պատմութիւնն ուզենայ  
զինքը դատել, միշտ մեծ կը մնայ և  
հաւասարապատիւ իր նախորդացը . իր  
զրաւած տեղը հոն է՝ ուր են լէոն  
մեծն, Գրիգոր մեծն, Գրիգոր Թ, Աղե-  
քսանդր Դ, լէոն Ժ, Յովիտ Բ » :

Այսպիսի մեծ և նշանաւոր՝ նուիրա-  
կան անձ մը ծանօթացընելու համար  
գրուած են մեր հրատարակած քանի  
մը էջերը . ազօտ և տկար ուրուագիծ  
մը այն կենաց՝ որ արդէն հատորներու  
նիւթ եղած է, և ամենուն իրաւացի  
հետաքննութեանը ճարակ :

Ա

Պիոս Թ, որուն մկրտութեան անունն  
էր Յովհաննէս, ծնաւ 'ի Սինիկալիա Ի-  
տալիոյ, յամին 1792, յերեքտասան  
մայիսի, Մասթայի-Ֆէրրէզի հին և  
աղնուական տոհմէն :

Մանուկ հասակէն՝ ընտիր ու հլու  
բարուքը՝ ծնողացն ու բարեկամաց խան-  
դաղատական գթոյն ու գորովայր  
խնամոցը առարկայ մըն էր : Սակայն  
դժբաղդ դէպք մը՝ անոր փառաւոր և  
աշխարհահաշակ կենաց թելը գրեթէ  
պիտի խզէր կտրէր, կամ թէ ըսենք՝ իր  
ընտյն վրայ պիտի գօսացընէր այդ ուղէ-  
չը : Վասն զի դեռ երբ տղայ էր, հօրը  
կայուածոց սահմանակից գետակի մը ե-  
զերքը խաղալու ատեն, անակնկալ գըլ-  
խոյ պտոյտ մը իմանալով՝ շուրն ընկաւ .  
ուր անշուշտ պիտի կորուսանէր կեան-  
քը՝ եթէ երիտասարդ հովիւ մը մէկէն

չիութար այն տեղ՝ ուր վտանգն ստոյգ  
էր, և չիփրկէր զմանուկը : Ոչ զք կրցաւ  
այդ անկման պատճառը հասկընալ-բայց  
երբ քիչ ատենէն ծնողքն վողէրրա քա-  
ղաքին մէջ գտնուած կրօնաւորաց դը-  
պրոց մը զրին զինքը, ուսումը և կրթու-  
թիւնը առաջ տանելու, այն տեղ այլ և  
այլ զիպաց մէջ յայտնի տեսնուեցաւ որ  
Մասթայի պատանեակը՝ լուսնոտութե  
դժնդակ ախտին ենթակայ էր : Սակայն  
այնպիսի ախտակրութեամբն ալ առա-  
քինութեանց ընտիր օրինակ մ'էր 'ի  
դպրոցին, ուսմանց ընթացքին մէջ ալ  
արագ յառաջդիմութեամբն և յաջո-  
ղակութեամբ՝ նշանաւոր էր աշակեր-  
տակցացը մէջ, և սիրելի իր դաստիա-  
րակացը : Դպրոցէն չհեռացած, հիւան-  
գութեան առժամանակեայ դիւր և թոյլ  
տալովը՝ յոյս առաւ թէ բժշկաց խնամ-  
քովը բոլորովին փարատած էր այն իր-  
մէ . և աշխարհէ հրաժարելով՝ ինքզինքը  
Աստուծոյ նուիրելու փախաքով վա-  
ռուած, ծնողաց տունը չլարձած՝ վոյ-  
դէրրայի եպիսկոպոսին հաճութեամբն  
եկեղեցական կենաց առաջին քայլն ը-  
րաւ, ընդունելով իրմէ զխուզումն հե-  
րաց : Ընտանեաց քով քանի մը ժամա-  
նակ կենալէն ետքը, անցաւ 'ի Հոովմ,  
նուիրական ուսմանց պարասելու իր  
հօրեղբօրը առաջնորդութեան և խնա-  
մոց տակ, որ արդէն քահանայապետա-  
կան արքունեաց մէջ մասնաւոր պաշտօն  
մը ունէր, և նշանաւոր էր գիտութեամբն  
և վարուց անարատութեամբ . և յա-  
ճախելով 'ի վարժարանն Հոովմէական՝  
սովորական եռանդեամբն սկսաւ յա-  
ռաջ վարել ուսմանց ընթացքը :

Այն ատեններն քաղաքական մեծ  
յեղափոխութիւն մը նոր կերպարանք  
տուաւ Հոովմայ : Պիոս է բռնադատուե-  
ցաւ թողուլ իր աթոռն, և յաղթող  
գաղղիական բանակին և անոնց առաջ-  
նորդին՝ ուզած և հրամայած պարտանքն  
ընդունիլ . անով քահանայապետական

տէրութիւնն դադրեցաւ 'ի Հռովմ, ծի-  
րանաւորք տարագիր ասդիս անդին  
ցրուեցան, եկեղեցական վարժարանք և  
ուսմունք փակուեցան և լռեցին . Մաս-  
թայի պատանեակն ալստիպուեցաւ թռ-  
ղու իր սիրելի պարապմունքն, և եր-  
թալ 'ի Բէզարոյ, միւս հօրեղբորը քով,  
որ նոյն քաղքին արթուն և քաջ հո-  
վիւն էր :

1810ին կրկին դառնալով իր ընտա-  
նեաց քով, հոն մնաց մինչև 'ի 1814 .  
յորում ամի մասնաւոր այցելութիւնն  
Աստուծոյ՝ զՊիոս Է քահանայապետ իր  
հեռաւոր բանտէն դարձուց փառք 'ի  
Հռովմ: Այն ատեն՝ անշուշտ քահանա-  
յական պաշտաման սրբութեանէն՝ երկիւ-  
ղած խոնարհութեամբ մը հրաժարիլ  
ուզելով, Մասթայի երիտասարդն փա-  
վաքեցաւ նուաստագոյն պայմանի մը  
մէջ ծառայել Աստուծոյ և եկեղեցւոյ  
գերագոյն հայրապետին, անոր պաշտ-  
պանութեանն նուիրելով իր անձը . ուս-  
տի և խնդրեց քահանայապետական  
ազնուատոհմ թիկնապահաց գնդին  
մէջ մտնել: Անոր տկար կազմուածքը  
տեսնող հրամանատարը՝ չուզեց խըն-  
դիրքն ընդունել. բայց սրբազան հայ-  
րապետին՝ Մասթայի երիտասարդին  
վրայ ցուցրցած խնամոտ գութն՝ ամէն  
գժուարութեան յաղթեց . որով և յա-  
ջողեցաւ իրեն՝ թիկնապահաց խմբին  
մէջ մտնելու փափաքելի հրամանն ընդ-  
ունիլ:

Ընտիր և ազնուաշուք երիտասարդը՝  
իր տոհմին և բարուցը արժանաւոր ըն-  
դունելութեան կը հանդիպէր ամէն  
տեղ, սէր և մեծարանք տեսնելով Հռով-  
մայ ազնուականաց և իշխանազանց  
մօտ . սակայն անոր երկիւղած սիրտը՝  
կրօնական հրահանգաց հաւատարիմ  
պահպանութեանն և աղքատաց վրայ  
ցուցրցած գթոյն և խնամոց մէջ կը ջա-  
նար փնտռել իր սրտին ու հոգւոյն ա-  
պահովութիւնը այն մեծ քաղաքին վը-

տանգացը դէմ, որ քրիստոսական կրօ-  
նից մայրաքաղաք և սրբավայր ըլլալովն  
ալ, բոլորովին ազատ չէր առաքինութե-  
դարանակալ ումն փորձութիւններէ,  
որոնք ալ աւելի կը յաճախեն մեծ և  
բազմամարդ քաղաքաց մէջ: Առանձին  
սէր մը ձգեց նոյն քաղաքին բազմաթիւ  
բարերարական հիմնարկութեանց վրայ,  
որոնց յայց ելլել և հօն երկար ժամեր  
անցընել իր ազնիւ սրտին զբաղմունք և  
հոգւոյն սնունդ մըն էր: Բայց մասնա-  
ւոր սիրով մը կապուած էր անոնց մէջ  
ամենէն աւելի աննշան և խոնարհ հաս-  
տատութեան մը հետ, և որ աւելի կեր-  
պով մը ընկերական կենաց աղքատ և  
անտէրունչ մասին օգտակար էր: Այս  
հիւրանոցին առաջին հիմնադիրն էր  
Յովհաննէս Պորկի կոչուած խեղճ որ-  
մնադիր մը (ծնեալ 'ի 1732) . որ իր ծանր  
արուեստին սակաւաւոր պարապոյ ու  
հանգստեան ժամերուն մէջ՝ անդու և  
անդադար ջանք մը կը ցուցընէր աղքա-  
տաց և հիւանդաց այցելութեան, և յա-  
ճախ ամբողջ երկար գիշերներ անոնց  
քով կ'անցընէր: Մէկ երեկոյ մը ուշ ա-  
տեն տուն դառնալու ժամանակ՝ սրտա-  
տուշոր տեսարանի մը հանդիպեցան աչ-  
քերը . քանի մը անտէրունչ մանրիկ  
տղայք տեսաւ՝ որ հանդչելու տեղ մը  
չունենալով, Ամենադից կոչուած հին  
եկեղեցւոյ դաւթին մէջ և ուրիշ մերձա-  
կայ տեղուանք քարերու վրայ տարա-  
ծուեր ընկեր էին, անխնամ, անոք և  
անօգնական: Այն օրուքնէն սկսաւ քո-  
վը ժողովել քանի մը որբեր ու իրենց  
ծնողացմէ երեսի վրայ ձգուած տղեկ-  
ներ . ու իր ջանքովը և բարերարաց սա-  
տարելովը հագուստնին ու ապրուստ-  
նին ճարելով, երկիւղած գործաւորաց  
քով տեղաւորեց զանոնք, որպէս զի ա-  
րուեստ մը սորվին: Երկու հոգեւտէր և  
եռանդուն քահանայք ալ քաջալերեցին  
զինքը այսպիսի բարերար ձեռնարկու-  
թեան մը մէջ յարատեւել, ու խորհրդը-

դով և դրամական նպաստիք օգնեցին իրեն . գտան իրենց համամիտ և համասիրտ անձինք ալ թէ յեկեղեցականաց և թէ յաշխարհիկ դասուէ , որ կը յաճախէին այն մանրիկ արուեստաւորաց կրօնական ու նախնական կրթութեամբն զբաղելու : Պորկիի մահուամբ այդ բարի գործը երեսի վրայ չմնաց : Քահանայապետն Պիոս Է անոնց մասնաւոր բնակութեան տեղ տուաւ , ու հասարակաց դանձնէ ալ կարեւոր նշնակաստներն հայթհայթելու համար պէտք եղած կարգադրութիւններն ըրաւ : Մասթայի կոմսը՝ որ այդպիսի բարեգործութեանց նուիրեր էր իր երիտասարդ հասակը , հօն ժողովուող պատանեկաց եռանդուն և յարատե երեկոյեան ուսուցիչներէն մէկն եղաւ . ու կիրակի օրերն ալ կը ժողվէր զանոնք , քաղքէն դուրս եղած մարգագետինները կը տանէր , կը զբօսեցընէր ու կը հրահանգէր , և նիւթական վայելքներով ալ սիրելի ու ախորժելի կ'ընէր անոնց իր անձին և ընկերութեան հետ նաև տուած կրթութիւնն :

Երեկոյ մը՝ փութալան եռանդեամբ կը սպասէին իր սիրելի աշակերտքն աւոր դալտեան և սովորական դասերուն : Երկար ատեն ընդունայն սպասելէն ետքը՝ երբ կը պատրաստուէին իրենց ընթրիքն ուտելու , և ահա հիւրանոցին դրան առջև կառքի մը հասնելուն ձայնն առին : Յոնդանա ծիրանաւորին կառքն էր , որուն բնակարանը իրենցմէ շատ հեռու չէր : Կառավարը փութաց իմաց տալ դանապանին թէ մօտ տեղ մը՝ անկիւնը դուռած աղօտ լապտերի մը լուսովը երիտասարդ մը տեսեր էին ճամբուն վրայ ընկած , նշնակութեան ու տագնապի մէջ . և ձիերուն խրտելէն զգուշանալով այնպիսի տեսարանի մը առջև , փութացեր էր իմացընել որ երթան գտնեն զինքն , և պէտք եղած օգնութիւնն ու դարմանը

ընեն : Սրտացա վազեց դանապանը նշնակուած տեղը , ու սրտին մեծ ցաւովը տեսաւ որ այն խեղճ վիճակին մէջ գտնուող երիտասարդը Մասթայի կոմսն էր . ու նոյն ծիրանաւորին ծառայից օգնութեամբը գրկեց կառք դրաւ զինքը , ու իրենց հիւրանոցը փոխադրելով , երկար խնամքով հաղիւ կըցաւ գտնել իր առողջութիւնը :

Այս տխուր զէպքը բոլոր Հռովմայ մէջ հռչակուելով , ոչ միայն զինքը ճանչցող ու սիրող բարեկամացը վիշտ եղաւ , այլ նաև քահանայապետական ազնուատոհմ թիկնապահաց գնդին գլխաւորը բռնադատուեցաւ Մասթայի կոմսին անունն անոնց դասակարգէն ջնջել : Քահանայապետն երբ իրեն այս միտքն իմացաւ , ուղեց անձամբ հաղորդել տխուր լուրը , որպէս զի կոմսին սրտին վրայ ընկիւք ցաւալի տպաւորութիւնն ալ ինքն ըլլայ մեղմով . ուստի համառօտ տոմսակ մը ուղղեց առ նա՝ իմացընելով թէ երկրորդ օրը ժամը երկուքին քահանայապետական արքունիքը գտնուի , վասն զի Աստուծոյ կողմանէ ըսելիք մը ունէր իրեն : Գուշակեց Մասթայի , ու երկրորդ օրը որոշեալ ժամուն՝ սրբազան հօրը ուղեւ ընկած , դողդոջուն ձայնով ու արտասուալից աշուրներով , « Ի՞նչ պիտի ըլլայ , — կ'ըսէր ու կը հառաչէր , — իմ վիճակս , երբ այսպէս յառաջագիմութեան ամեն ասպարէզ կը գոցուի իմ առջևս : — Հանդարտե , որդեակ , պատասխան տուաւ քահանայապետը վասն զի կրնանք միշտ բանի մը օգտակար ըլլալ , երբ կը խնդրենք յԱստուծոյ իր կամքը կատարել : Ո՞վ կրնայ իր խորհրդոցը հասու ըլլալ , Ո՞վ գիտէ թէ քու առջևդ ամէն ասպարէզ գոցելուն վախճանը ուրիշ բան չըլլայ , բայց եթէ կոշիկ դքեզ առ ինքն : Արդեօք քահանայի նուիրական կենաց և վիճակին վրայ՝ երբէք մտքէդ խորհրդա-

ծուխի մը անցած չէ : — Խիստ շատ անգամ, պատասխանեց Մտաթայի, և մանաւանդ այն դիշերուան դժբաղդ դէպքէն վերջը . սակայն զինուորական կեանքէ զիս խափանող արդեւոր՝ թոյլ չի տար քահանայական վիճակին համար ձակեցրնել : . . Երբէք ինծի համար չկայ բժշկութիւն, — Այդ վերջի խօսքդ՝ միայն Աստուծոյ կը պատշաճի, վրայ բերաւ քահանայապետը . դիմէ առ նա, և յուսա իր գլխութեան վրայ . . . Գերեզմանի մեռելութենէն կեդանութիւն տուող Տէրը՝ կրնայ բժշկել նաև զՄասթայի . . . և եթէ իմ նախագգած ուժիւն ներս զիս չեն խաբեր՝ պիտի բժշկուի նա : . . . Միացուր քու աղօթքդ իմ աղօթիցս հետ ինն օր շարունակ, ու յետոյ դարձիւր առ իս՝ յաւիտենական կեանքը տուող սուրբ հացն ընդունելու » :

Հարկ չէ ըսելը թէ որչափ և որպիսի սփոփանք ազդեցին երիտասարդ կոմսին սրտին վրայ այս հայրագութ և գրեթէ մարգարէական խօսքերը . ու ինն օր շարունակ՝ ամէն առաւօտ կանուխ Սյրբուհի Մարիամ Հրեշտակաց կոչուած եկեղեցին կ'երթար՝ բոկոտն ու գլխիբաց՝ ու երկար ժամեր աղօթքով կ'անցընէր՝ միջնորդ բռնելով ըզկոյան սուրբ, բարեխօս դնելով զինքը իր տկարութեանը և Աստուծոյ մեծութեանը մէջ, փափաքելի առողջութիւնն ստանալու համար : Իններորդ օրը սրբազան քահանայապետին ձեռքէն հաղորդուելով, առանց ամենին իր ապագային վրայ խորհրդածելու, բոլորովին Աստուծոյ յանձնուած դարձաւ միւսանգամ իր հայրենիքը : Ու երբ քանի մը ամսէն նորէն երևցաւ ՚ի Հոռովմ, զինքը ճանչցողներն շատ զարմացան անոր անասկնկալ և անսովոր առողջութիւնը տեսնելով : Այլ առանց երկմտելու, 1846 տարւոյն առաջին ամսներուն եկեղեցական զգեստներն և

փոքր աստիճաններն ընդունելով՝ Ա. Լեռնական եկեղեցականաց կոչուած ակադեմիայն կը մտնէր, իմաստուն և հոգեւանդ՝ հրացնողի քահանային առաջնորդութեանը տակ :

Երբ անխոնջ ջանքով կը յարատեւէր եկեղեցական ուսմանց ընթացքին մէջ, հաւասար եռանդեամբ և սիրով հոգևոր պարապմանց ալ զբաղելով՝ կ'անցընէր իր ժամերը, բարեպաշտական հիմնարկութեանց այցելութեամբ, և իւր սիրելի աշակերտաց հիւրանոցին վրայ մասնաւոր խնամքով . մէկ կողմանէ ալ ուսմամբ և սրբակօծ վարուք անուանի անձանց հետ ծանօթանալով, կերպով մը անոնց օրինակին վրայ կը ջանար ձուլել ինքզինքը . և անով ամենուն սէրն ու մեծարանքը կը հրաւիրէր իր վրայ : Այսպիսի եռանդեամբ քահանայական նուիրական վիճակին պատրաստելով ինքզինքը, 1849ին կ'ընդունէր զձեռնադրութիւն ՚ի Տէլլա-ձէնկա ծիրանաւորէ, որ ետքը քահանայապետական ակթոռոյն վրայ բազմելով՝ Լէոն ԺԻ կոչուեցաւ : Ասանկով քահանայապետ մը յորդորեց զինքը յընդունելութիւն եկեղեցական վիճակի, ուրիշ քահանայապետ մը ձեռնադրեց զինքը, և երբորդ քահանայապետ մ'ալ եպիսկոպոսական օծութիւնը տուաւ : Իւր հիւրանոցին խեղճ մատրանը մէջ, սիրելի որբերէն շրջապատուած, հօրը և ընտանեաց ներկայութեամբը, որոնք Սինիկայիայէն եկեր էին ՚ի Հոռովմ, սուրբ զատկի օրը իր առաջին պատարագը մատոյց, իւր սրտին մեծ ուրախութեամբն և յուզմամբ, ու ամէն առաջիկայ գտնուողներուն բարեպաշտ զգացմամբը : Սակայն զինքը շարչարող հիւանդութիւնը նկատելով, պատուիրած էին որ կամ առանձին մատրան մը մէջ մատուցանէ միշտ սուրբ պատարագը, և կամ ուրիշ քահանայի մը առջնութեան կայութեամբը : Չեռնադրուելէն

եաքը սեանելով որ այդ վախը չկար, ընկաւ սրբազան հայրապետին ոտքը և թախանձանօք խնդրեց որ այդպիսի ծանր պայման մը իրմէ վերջընէ: Պիոս Է խնդիրքը կատարեց, և քաջալերելով զինքը՝ գուշակեց որ այն ախտը մէկ մ'ալ վրան պիտի չդառնար: Քահանայապետին խօսքը կատարուեցաւ:

Չեռնադրուելէն քիչ ետքը՝ Հովմայ գլխաւոր եկեղեցեաց մէկուն կանոնիկոսաց կարգին մէջ ընդունուեցաւ: Բայց ինքը ընտրած վիճակին մէջ պատուէ ու փառքէ փախչելով, Աստուծոյ ժողովրդեանը բարւոյն և հոգւոց վերկուծեան հրաշալի օրինակ մըն էր ամենուն: Խօսելու դիւրութիւն մը, զօրւոր ձայն, և անոնցմէ աւելի Աստուծոյ հոգւոյն ու խօսքին տէր, սկսաւ քարոզութեան պարապիլ. և ունկնդրացը բազմութեան և անոնց վրայ տեսնուած հօգեկան օգտին մէջ ամէնքը յայտնի կը նկատէին իր բանից ոյժը և ազդեցութիւնը: Օտէսգալզի ծիրանաւորը լսեց անոր համբաւը, և փափաքեցաւ որ իր հայրենակցացը՝ Սինիկալիոյ բնակչաց, հոգևոր կրթութիւն մը տայ: Մեծ եղաւ քաղաքացւոցը վրայ ըրած տպաւորութիւնը, երբ իրենց ամենէն աւելի ազնիւ տոհմին մէկ զաւակը տեսան բեմին վրայ եկեղեցական խոնարհ զգեստներու տակ, ապախարութիւն և փրկութիւն քարոզելով: Այս հօգևոր պարապմանց մէջ ալ չուզեց երբէք թողուլ իր որդերը, և քահանայապետէն անոնց տեսուչ դրուելով՝ հօն աղքատին սենեկի մը մէջ կը բնակէր, անոնց բարւոյն և հանգստութեանը գործածելով ինչ որ յընտանեկան գոյից և ՚ի ստացուածոց կը հասնէր իր ձեռքը:

Չորս տարի այդ անմեղ և սիրելի մանկութեան հետ անցընելէն ետքը, Պիոս Է առաքինի և զօրւոր սրտի տէր անձի մը պէտք ունենալով, որպէս զի

Քիլի, փէրու և Մէքսիկոյ իր կողմանէ զրկուելիք առաքելական նուիրակին ընկեր ըլլայ, Մասթայի կանոնիկոսին վրայ ընկաւ իր ընտրութիւնը: Տարօրինակ դժուարութիւններու հանդիպեցան առաքելական նուիրակն Գեր. Մուցի և իր ընկերը: Մայրքայի մէջ՝ Սպանիացիք գժգմնելով որ Հովմ իրենցմէ ապատմը աշխարհաց հետ բարեկամական յարաբերութիւններ կ'ուզէ հաստատել, բանտ դրին զիրենք: ազատեցնէն ետքը՝ նաւերնուն միայ ասպատակաւորք դիմեցին, ահաւոր մըրըկաց և այլեկոծութեանց հանդիպեցան. ստիպուեցան Պամպասի անապատաց երկայնութիւնը կտրել, գիշերներ բացօթեայ հանգչիլ, ու յաճախ կերակրոյ և ջրոյ պակասութիւն կրել: Բայց այդ ամէն վտանգաց և նեղութեանց առջև իրենց առաքելական ոգւոյն եռանդը երբէք չտկարացաւ:

Օր մը նաւով վալբարայիզայէ Լիմա անցնելնուն ատեն այնպիսի սոսկալի մըրկի մը բռնուեցան, որ ալ ամենքը անխուսափելի մահ մը տալուքնուն առջև կը կարծէին տեսնել: Կը պատմեն թէ այն վտանգին մէջ՝ Մասթայի աչուրներն ու ձեռուրները երկինք վերցընելով, չէր կրնար ուրիշ աղօթք և ուրիշ հառաչանք մը գտնել, բայց եթէ առաքելապետին թախանձանքն առ փրկիչն՝ որուն հրամանէն կը լուէ ծով, և որուն կը հնազանդին հողմունք. «Տէր, փրկեա զմեզ, կը գոչէր, զի կորնչիմք»: Եւ ահա յուզեալ և փրփրագէզ ալեաց վրայ նաւակ մը կը տեսնուէր, յորում քանի մը խեղճ սեներ, Պաքոյ անունով աղքատ ձկնորսի մը առաջնորդելով կը մօտենային նաւուն: Պաքոյ ցատքեց վեր ելաւ, ուժով ձեռքով մը բռնեց նաւուն զեակը, և հմուտ այն ծովերուն և հողմոց, գիտցաւ սյնպիսի առաջնորդութիւն մը ընել, որ նաւը կրցաւ անվտանգ փորձոյ-Ռիզոյի նաւահան:

գիտան ապահովիլ: Երկրորդ օրը՝ մահուան վերահաս վտանգէն խալըսող քահանայն, իր կեանքը՝ Աստուծմէ ետքը այն ձկնորսին անձնանուիրութեան պարտական սեպելով, կ'երթար իւր ազատարարին հիւզը, և 'ի նշանակ երախտագիտութեան՝ երկու հազար Ֆրանքաց դումար մը կը յանձնէր: Քահանայապետական ամբողջ բարձրանալէն ետքն ալ՝ չմոռցաւ Պիոս Թ ա մերիկացի ազքատ ձկնորսը. վասն զի բարեաց ընդունելութեան խոստովանութիւնը՝ միայն նկուն և փոքրոգի սրտերու բեռն է. այլ փութաց զրկել առ նա իւր կենդանագիրը և նոյնչափ դումար դրամայ: Պաքոյ՝ որ ալ առջի խեղճ և ազքատ վիճակին մէջ չէր, կարգէ դուրս զգածուելով սրբազան հօրը սրտին բարութենէն, իր տանը մօտ՝ ծովեզերեայ պզտի ու գեղեցիկ մատուռ մը շինել տուաւ, ու հօն պատուիրեց զնեւ քահանայապետին դէմքը, անմոռաց յիշատակ մը անոր սրտին բարութեանը, և մխիթարութիւն մը իրեն և որդւոցը, որ այդպիսի կեանքի մը փրկութեանը սատար եղած էր:

Ժողովուրդը մեծ և սիրալիր ընդունելութիւններ ըրաւ առաքելական նուիրակին և իր ընկերոջը. բայց պետութիւնք չկրնալով անտարբեր աչքով նկատել այն սէրն ու պատիւը՝ յորոց իրենց վտանգի մը սպառնալիք կ'ենթադրէին տեսնել, բռնադատեցին զիրենք որ յամին 1825 նօրէն դառնան 'ի Հռովմ:

Նոյն ատեններն իւր բարեգորով պաշտպանն Պիոս Է՝ առաքինութեանցը և կրած վշտացն փոխարէնը ընդունելու հրաւիրուեր էր յԱստուծոյ. և սրբոյն Պետրոսի ամբողջ վրայ զինքը յաջորդեր էր Լէոն ԺԲ. և որ մեծ սիրով ընդունեցաւ զՄասիթայի, և մէկէն սրբոյն Միքայելի անունը կրող Հռովմայ մեծ հիւրանոցին տեսուչ և վերակացու

կարգեց զինքը, ուր գրեթէ եօթնհարիւր սուրբ և օրիորդք՝ արուեստներ կը սորվէին և կարևոր ձեռագործաց կը պարապէին, ուր ծերք և անկարողք՝ փափաքելի ապաստանարան մը, և արաք՝ իրենց փրկարար ուղղութիւնը կը գտնէին: Հարկ չէ ըսելը՝ թէ որպիսի հայրագութ ինամբ և գորով ծաւալեց սփռեց այն աստուածահաճոյ դործոյն վրայ. ինչպէս սփոփեց զԹշուռութիւն, խրատեց և ուղղեց զմոլորութիւն, առաջնորդեց աղկաղկ և տկար հասակին, և քանի ճարտարութիւն և արթնութիւն ցըցուց այն հիւրանոցին դժուարին կառավարութեանը մէջ, որ Լեոն ԺԲ՝ քսան ամէն ետքը, 1827 մայիսի 21ին արքեպիսկոպոս անուանեց զինքը Սբովէղոյ քաղաքին, և որ մասնաւոր կերպով մը սիրելի էր քահանայապետին, հօն իր մանկութեան որրանն և հայրենիքն ըլլալուն համար: Ծիրանաւորաց Ժողովոյն առջև նուիրելոյն արքեպիսկոպոսական աստիճան բարձրանալը հոչակած ժամանակ, զինքն այն երկնաւոր օծմամբ մեծարել ուզող հայրապետն՝ կը դրուատէր իւր աշխարհալուր բարեմասնութիւնները, խոհականութիւնը, գիտութիւնն, եռանդը, բարուց քաղցրութիւնը և վարուց անբիծ անարատութիւնը:

Բ

Սրբոյն Միքայելի հիւրանոցին խնարհ ուղղիչը՝ տակնուվրայ եղաւ իմանալով այն բարձրութիւնը, առ որ կը հրաւիրէր զինքը Հօգին սուրբ՝ քահանայապետին ձայնովը. և ընտիր հօգուց յատուկ առաքինութեամբը՝ իր անձին վրայ անբաւականութենէն և խեղճութենէն զատ ուրիշ բան մը չտեսնելով: « Դող մը ու տագնապ զիս պաշարեց, — կը գրէր առ թեմականսն ուզողած առաջին հովուականին մէջ. աչքիս առջև կու գային պաշտաման

մեծութեան հետ իմ ամենայն տկարութիւններս . ուստի ամեն հնարք փորձեցի , բոլոր ջանքով ետևէ եղայ որ հեռացընեմ զայն յինէն » : Սակայն Ղէոն ժՔ որ զինքն աղէկ ճանչցած էր , անոր խոնարհութեան թելադրած ամեն պատճառաց զէմ անտեղիտալի մնաց : Բռնադատեցաւ Մասթայի՛ քահանայապետին հրամանին մէջ Աստուծոյ ձայնը լսել . ուստի և մտադիւր խոնարհեցաւ այն գերագոյն և կարող կամքին առջև , որ ինչպէս խոնարհութեամբ կը գրէ , կը վերցընէ կը բարձրացընէ զաղքատն յաղբեւաց , որ 'ի քարանց' Աբրահամու որդիք կ'երեցընէ , և իրեն եռանդագին դիմողաց՝ շնորհաց հետոյժ և զօրութիւն կը յաճախէ :

Նոյն տարւոյն յունիս ամսեան մէջ՝ Գասդիլիոնի ծիրանաւորէն , որ ետքը Պիոս Բ կոչուեցաւ , Տրապիզոնի և Տամիաթի անուանական արքեպիսկոպոսաց առնթեբրակացութեամբը՝ եպիսկոպոսական օժումն ընդունեցաւ 'ի Հռոմով , Սրբոյն Պետրոսի կապսուսաց հոյակապ եկեղեցւոյն մէջ :

Սրբէզոյ քաղաքն ու թեմը չէին կրնար անտարբեր մնալ սրբազան քահանայապետին իր ծննդեանն երկրին վրայ ցուցրցած սիրոյն և գորովալիտ խնամսնցն առջև , յանձնելով զիրենք այնպիսի հովուի մը՝ որուն բովանդակ կեանքն անձնանուիրութիւն մըն էր , և որուն սրտին և բարուց ազնիւ ձիրքերը՝ երեսին վրայ ալ կը փայլէին : Հանգիսական մուտքն 'ի քաղաքն ըրաւ 'ի 1 յունիսի . և քիչ օրերու մէջ ալ յայտնապէս տեսնուեցաւ թէ ոչ քահանայապետը սխալած էր իր ընտրութեանը մէջ , և ոչ ալ ժողովուրդը խաբուած իր յուսովը . վասն զի ճշմարիտ պատկեր մը երևցաւ այն աստուածային հովուապետին , որուն նմանողութեան մէջ է իրմէ հովուելոց ժամանակաւոր և անոնց բարեբաստութիւնը :

1831ին ձմեռն էր : Քահանայապետին աշխարհական իշխանութեան հրպատակ բոլոր գաւառներն , Տիրեբրիսէն մինչև 'ի Բոյ , տակնուվրայ եղած էին խռովարարաց ծածուկ ջանքովն ու հնարագիտութեամբը , նպատակ ունենալով գահակորոյս ընել զնորընտիր քահանայապետն Գրիգոր ժՉ : Այդպիսի անարժան պատերազմի մը դաւաճան գրգռութենէն՝ լանաց արքեպիսկոպոսոսն ազատ պահել իր թեմը . բայց փետրուարի 13ին Սրբէզոյ քաղաքն ալ ոտք ելաւ , ու իր խրատներն , աղերս ու թախանձանք բաւական չեղան յուզուած կըրքերն հանդարտեցընելու համար . ուստի և բռնադատեցաւ առժամանակ մի հեռանալ անկէ , առջի յուզմանց հանդարտելուն սպասելով : Բայց երբ իմացաւ թէ խաղաղութիւնն ու բարեկարգութիւնը հաստատելու համար կարևոր կը սեպուէր իր ներկայութիւնը , առանց ժամանակ կորսնցընելու փութաց դառնալ հօն : Խռովարարք Սերգոնեանի զօրավարին առաջնորդութեամբ պաշարեր էին Չիվիդա-Գասդէլլանա քաղաքը . բայց լսելով թէ աւստրիական բանակը արդէն մտեր էր՝ 'ի Պոլոնիա և 'ի Մարթա , ու յառաջ կը խաղար , փութացին պաշարումը վերցընել , ու Սրբէզոյի վրայ դիմելով աւարել զայն , ու յետոյ լեռանց վրայ ցրուելով՝ սահմաններէն անպատուհաս դուրս փախչիլ : Բոլոր քաղաքացիք ահաբեկը և տագնապալից այն չորս հազար հոգիէ կազմուած ապստամբաց խմբի մը սպառնալից արշաւանքէն , բոլոր վստահութիւննին Աստուծոյ և իրենց արքեպիսկոպոսին վրայ դրած էին : Գեր . Մասթայի որ այն ատեններն արտաքոյ կարգի տեղակալ կարգուած էր Սրբէզոյի և Բէրսուճիայի գաւառաց , չհրաժարեցաւ այն գործէն . յօժար և պատրաստ՝ ինքզինքը բովանդակ զնելու իր հօտին վրայ , վազեց

ուր պարտք և արտասուք կը հրաւիրէին զինքը, և զհացաւ այնպիսի ճարտարութեամբ վարուիլ խռովարարաց հետ, անանկ քաղցրութեամբ յահլ սրտերնին, որ յաջողեցաւ զէնընկէջ զինս. թափ իր ոտքին առջև խոնարհեցընել:

Հաւատարիմ իր տուած խոստմանը, անոնց կեանքը պահելու, ամէն մեկուն ձեռքը սահմաններէն անվտանգ անցընելու համար մէյակէկ անցագիր տուաւ, և պէտք եղած ստակը դրաւ գրպաննին: Անոնց թուոյն մէջ էր նաև Նարոյէն Գ և իր եղբայրը, որոնց ետևէն արդէն ընկած էին աւստրիական բանակին զինուորք, և անհրաժեշտ մահուան մը վտանգին մէջ: Ուրիշ փրկութեան տեղ մը չկրցան գտնել, բայց ուր երգուընցեր էին ամեկ զմահ և զարհաւիրս: Ինկան Սթոյլզոյի արքեպիսկոպոսին գիրկը, և հօն գտան իրենց անակնունելի ազատութիւնը և փրկութիւնը:

Խոհական արթնութեամբն այսպիսի հարուած մը հեռացընելով, քիչ ատենէն ուրիշ ահաւորագոյն վտանգի մը մէջ առաւելապէս փայլեցուց իր սէրը: Վասն զի նոյն 1834 տարւոյն հոկտեմբերի 27ին երկրաշարժի ցնցում մը ահուգոյի մէջ ձգեց զամէնքը. և հետեւեալ տարւոյն յունուարի 13ին կրկնուելով սաստկապէս, ահաբեկութիւն, աւերմունք և թշուառութիւն բերաւ իր հետը: Արքեպիսկոպոսն իր սիրելի ժողովրդեան այնպիսի աղիտից և կարօտութեանը չդիմանալով, բաւական չտեպեց իր ամէն ունեցածը անոնց բաշխելը. դիմեց յօգնութիւն այն թըշուառներուն. և ուր անձամբ չէր կըրնար հասնիլ, կրօնաւորաց, բժշկաց և ճարտարապետաց ձեռքով տարածեց ընդարձակեց իր գութը, սփռեց՝ ցըրուեց իր սէրը. հանդերձ, բժշկութիւն և բնակութեան տեղ տուաւ աղքատին և կարօտելոյն: Այնպիսի և այնպիսի

խնամոց և համատարած զթոյն լուրը պըանչացոյց զիտալիա. մեծացոյց և փառաւորեց զինքը Գրիգոր ԺՁ քահանայապետն, և երախտագէտ թեմակահանց սիրտը բոլորովին իրեն գրաւեց. որոնք երբ իմացան թէ Հռովմայ հայրապետն Ի՛մուլ քաղաքին եպիսկոպոսական աթոռը կ'ուզէր իրեն յանձնել, որ արդէն Պիոսի է մը առաքինութեամբը պայծառացած էր, աղաչաւորք զրկեցին 'ի Հռովմ, որպէս զի չի զրկէ զիրենք այնպիսի հովուէ մը: Բայց Գրիգոր ԺՁ աւելի իր սրտին քան անոնց աղաչանացն անսալով, չընդունեցաւ այն պատգամաւորութեան խընդիրը: Վասն զի սահմանուած էր յերկնից որ Մասթայի նստի այն աթոռոյն վրայ՝ ուր արդէն բազմեր էր Գիարամիճի, որպէս զի Պետրոսեան գահը՝ Պիոսի թ մը հաստատութեամբը փառաւորէ, զոր յառաջագոյն Պիոսի է արիութիւնն աշխարհահոյակ ըրած էր:

Հեռացաւ Մասթայի իր հօտէն, թեմականացը սիրոյն հետ տանելով նաև իր սիրտը, որ բաւական էր թէ ի՛մուլա և թէ Սթոյլզոյ գրկելու, և յորում օր մը բոլոր ուղղափառ աշխարհք պիտի ամփոփուէր: Վառուած այն աստուածային նախանձովը որ միանգամայն կը տեսնէ, կ'ուզէ և կը սիրէ, յերկնից սահմանուած նոր վիճակին մէջ ալ ամեն ջանք երեցուց իր հոգևոր որդեղը բարւոյն համար: « Տանուչորս տարի. — կը վկայէ իր կենսագիրներէն մէկը, Ի՛մուլա քաղաքին եպիսկոպոսութեան պաշտօնը վարեց. և չանցաւ տարի մը որ նշանաւոր բարեգործութեամբ արգասաւոր չըլլայ իր հօտին. նորոգեց այլ և այլ եկեղեցիներ, հայրապետանոցը, մայր եկեղեցւոյն շէնքը՝ որ անկատար մնացեր էր, կառոյց 'ի հիմանց հոգևոր կրթութեանց տուն մը կզբրին համար. վարժարան մը այն ժառանգաւորաց համար՝ որոնք իրենց ծնողաց

դրամական անձկութեան համար չէին կրնար եպիսկոպոսական դպրոցը մշտնել, հիւրանոց մը՝ աղքատ որբերուն քրիստոնէական դաստիարակութիւն, մեքենական արուեստներ և հարկաւոր ապրուստը հոգալու համար. նմանօրինակ հաստատութիւն մը նաև որբ օրիորդաց համար, և ուրիշ երկու դպրոցներ աղջկանց. մէկն աղքատաց, իսկ միւսը չափաւոր ընտանեաց զաւակաց կրթութեան, և որոնց խնամատար կարգեց զՔորս՝ գթութեան. անոնց յանձնեց նաև հասարակաց հիւանդանոցի՝ ու իրմէ՛ ի հիմանց կառուցուած դրամանոցի մը խնամքը ։ կը թողունք յիշատակել ուրիշ ասոնց նման բարեբարութիւններն, որոնցմով բարեկարգեց, պայծառացուց և զարդարեց իր վիճակը ։

Գրիգոր ԺԶ որ շատ լաւ ճանչցեր էր իր խոհականութիւնն և ընտիր բարեմասնութիւններն՝ որ նախանձորդ մը կ'երևցընէին զինքը կարողոսի Պորրոմէոսի, և վիճակներսի պաւլայեցուց հանգիտապատիւ սրտի մը տէր. որուն մատակարարը շատ անգամ գանգատեր էր թէ ամեն ունեցածը՝ ինչուան արծաթի զրգալներն ու պատառաքաղներն և առտանակները աղքատաց կը բաժնէ, և շատ անգամ իր չափաւոր կերակուրը պատրաստելու համար պէտք եղած ստակը կը պակտի տանը մէջ, ու զից անոր այսպիսի գեբազոյն առաքինութիւնները վարձատրել, ամբառնալով զինքը՝ ի պատիւ ծիրանեաց. ուստի 1839 դեկտեմբերի 23ին ժողովին մէջ կարդինալ առտանեց, և հրատարակեց ՚ի 1840 դեկտեմբերի 14ին. Այս ընտրութեամբ իր յաջորդը անուանած էր. և Գրիգորի ԺԶ խորունկ ու թափանցող մտքին համար մեծ պատիւ մըն էր. և որուն արձագանգ մըն էր սուրբ ժողովին հաճութիւնը այդպիսի սրբակրօն և առաքինի անձ մը իրենց մէջ տեսնելուն

համար, և բոլոր ի՛մուլա քաղաքին և վիճակին ուրախութիւնը ։

Այն հասարակաց ուրախութեան և գոհութեան մէջ՝ միայն ինքը Մասթայի տրտում էր. վասն զի սրտաճմլիկ վիշտ մըն էր իրեն տեսնելը այնչափ անզոյշ պատանիք՝ որոնք եկեղեցույ և երկնից համար ծնած, անարժան և ծածուկ որոգայներով թշուառ զոհեր կ'ըլլային այն գաղտնի ընկերութեանց՝ որոնց նպատակն էր եկեղեցույ և արքունական ամթոռոց քանդումն ու տապալելը ։ Հարք և մարք այդ դժնդակ վտանգէն անհաբեկք կը զիմէին առ նա. ինքն ալ՝ իր արտասուքը անոնց արտասուացը հետ խառնելով՝ կը ջանար մխթաբել զիրենք, կ'աղօթէր ու աղօթել կուտար, և ինքզինքը բոլորովին կը նուիրէր այնպիսեաց դարձին և զգաստութեան համար ։ Այս վտանգին վրայ կ'աւելնար ուրիշ մ'ալ, քաղաքական յուզմանց և խռովութեանց, շատ անգամ ծածուկ և անձանօթ ձեռքերէ զրգուուած, որոնք մխթի տակ պահուած համաճարակ և աւերիչ հրդեհի մը սպառնալիք էին ։ Քիչ մնաց որ ծիրանաւոր արքեպիսկոպոսն անոնց ատելութեանը առաջին զոհն ըլլայ ։ Բիէմնդեցի մը՝ անոնցմէ հարիւր կամ երկուհարիւր հոգի իր գլուխը ժողոված, միտքը դրած էր զիչեր ատեն զիմել անոր վրայ, որ իր երկու ծիրանաւոր ընկերակիցներովը (Ֆլագոնիէրի և Ամադ) քաղքին մօտ գեղի տուն մը կը բնակէր. ու զանոնք պատանդ առնելով, իր ուրիշ համամիտ խռովարարքը ոտք հանել, և տիրել այն կողմերուն ։ Սակայն իմացան ծիրանաւորք իրենց դէմ լարուած նենգը. ու ծածուկ փախըստեամբ պատսպարուելով ՚ի քաղաքն, խռովարարաց խումբն ալ ստիպուեցաւ ցրուիլ ։

Այսպիսի շփոթութեանց մէջ վրայ հասաւ Գրիգորի ԺԶ մահը (1 յունիս

1846), ուժով բաղկաւ մը եկեղեցւոյ վրայ արձըկուած միրկաց գէմ տասնը-հինգ տարի արիւթեամբ կռուելէն ետ-քը, Ութ օրէն վերջը Գեր. Մասթայի կը մեկնէր ծիրանաւորաց ժողովոյն մէջ մտնելու. և կարծես թէ ներքին ազդե-ցութիւն մը իր թեմականացը գուշակել կու տար թէ յետին հրաժեշտի ողջոյն մը կու տային իրենց սիրելի հովուին, և զոր մէկ մ'ալ պիտի չտեսնէին իրենց արքեպիսկոպոս: Ճամբորդութեանը մէջ քաղաքէ քաղաք անցնելու կայարանի մը մէջ ձիերը փոխելու ատեն կառքին վրայ աղաւնեակ մը եկաւ հանգչեցաւ: Այն գէպքը տեսնող ժողովուրդը՝ ու-րախութեան ձայներով սկսան ողլու-նել նոր քահանայագետը. վասն զի ա-ղանջոյն դադարելուն վրայ կ'ախորժէին տեսնել՝ պատկեր մը այն սքանչելեաց, որով Հոգին սուրբ եկաւ ինչաւ Աս-տուածամարդոյն վրայ՝ ի Յորդանան:

Գ

Յունիս ամեան չորեքտասներորդ օրը՝ յիսուն ծիրանաւորք ընտրութեան ժողովատեղին կը հաւաքուէին՝ ի Հոռով-ու երկրորդ օրը ժամը իննին՝ ՚ի պա-տիւ Հոգւոյն սրբոյ մատուցուած պա-տարագէն ետքը քուէարկութիւնը կը սկսէր: Առաջին քուէարկութեան՝ Մաս-թայի ծիրանաւորը արդէն երեքտասան քուէ ստացեր էր. կէսօրուընէ ետքը եղածին մէջ ուրիշ չորս քուէ ալ առ-ջիններուն վրան աւելցան. իսկ երրոր-դին՝ որ հետեւել օրուան առաջին քու-էարկութիւնն էր՝ քսանութը քուէք կը միաբանէին իր անձին վրայ: Մաս-թայի իր խոնարհութեամբ այլ յայլմէ եղած՝ կարծես թէ Գեթեմանի պար-տիզին մէջ մահուան տագնապնեբու մէջ եղող մեր երկնաւոր վարդապետին նման չէր կրնար ուրիշ աղաչանք մը գտնել՝ բայց եթէ հեռացընել իրմէ այն

բաժակը. սակայն նախապես սեպելով միշտ աստուածային կամքը՝ իր արտա-սուացը հետ՝ կը նուիրէր նաև ինքզին-քը:

Յունիսի 16 էր. և ծիրանաւորք կէս-օրուընէ ետքը չորրորդ քուէարկու-թիւնը կ'ընէին: Զարմանալի հանդիպ-մամբ մը երեք քուէհամրողներէն մէկն ալ ինքն Մասթայի ծիրանաւորն էր, և ընտրելեաց անուանքը ժողովոյն հրա-տարակողը: Նուիրական գումարելոց ա-մենուն աչքը իր վրան էր. իր սիրտն ալ կը բաբախէր յիշատակաւ այն բե-ռանը՝ որ քիչ ատենէն պիտի ծանրա-նար վրան. և այնպիսի անսահման պա-տասխանատուութեան մը առջև՝ թալ-կացեալ երեսներն ալ յայտնապէս կ'ե-րեցընէին սրտին յուզմունքը: Քուէհա-մարը սկսաւ. Մասթայի ծիրանաւորն անգաղար իր անունը կրկնուած կը տեսնէր: առաջինը, երկրորդը, եր-րորդն... մինչև եօթնևտասներորդը շարունակաբար իր ստացած քուէներն էին: Զայնը սկսաւ գողալ. ու երբ ու-թևտասներորդին վրայ ալ իր անունը տեսաւ, տարօրինակ այլայլութիւն մը եկաւ վրան. աչուըները սկսան մթ ըննալ ու խօսքը պակսեցաւ մեռաւ շրթանցը վրայ: Վայրկեան մը լուծինէ ետքը, աչուըներէն սկսան կայլակիլ աղբբը արտասուաց. ու աւելի մեռելոյ քան թէ կենդանի մարդու ձայնով սկսաւ թախանձել որ ուրիշ մը յանձնեն ա-նունները հոշակելուն պայտօնը. սրտին տագնապէն մոռցեր էր այն կանոնա-դրութիւնը որ կ'ընդունայնացընէ ընդ-հատուրթեամբ եղած քուէարկութիւ-նը: Ուստի նստել տուին, պատուիրե-լով որ քիչ մը հանգչի. ու ետքը նորէն սկսելով քուէհամարը՝ երեսունևվեց անգամ կրկնուեցաւ իր անունը: Այ-նուհետև ինքն էր նորընտիր քահանա-յապետը: Բոլոր ծիրանաւորք ոտք ել-լելով՝ ողջունեցին զինքը: իր խոնար-

հովեամբն և պարկեշտ չափաւորութեամբ ստացեր էր անոնց քուէն ալ որ յառաջագոյն օտար կարծիք և առաջարկութիւն ունէին : Առաջին յաղթանակ մըն էր այն՝ գուշակ այլոց բիւրաւորաց :

Արտասուագին և տխուր աշուրները՝ զինքն սյն պատուոյն բորձրացնող ընկերակցացը վրայ գարձընելով . « Տեւորք իմ, ըսաւ, ինչ էր զոր գործեցիք » : Ու մարեցաւ ընկաւ :

Ինքզինքը գտնելէն ետքը՝ մտեցաւ իրեն երկրորդ նախապատիւ ծիրանաւորը, ու սովորութեան համեմատ հարցուց իր կալիքը, եթէ կ'ուզէր ընդունիլ իրեն յանձնուած պաշտօնը, և ինչ աւնուն կրելով :

Արտասուախառն և հառաչալից ձայնով մը պատասխանեց . « Կը հնազանդիմ Աստուծոյ՝ որ իմ ոչնչութիւնս այսպիսի մեծ պաշտաման մը կը բարձրացընէ . և մեծ է վստահութիւնս իր շնորհաց և օգնականութեան վրայ » : Եւ յայտնեց թէ կ'ուզէ Պիոս թէ կոչուիլ, 'ի յիշատակ Պիոսի, որուն անչափ յարգանաց հետ՝ երախտապարտ ալ կը սեպէր ինքզինքը :

Խոնարհութիւնն և սրտին աղնիւ ըզգացմունքն յայտնապէս կ'երևնան հետեւեալ նամակին խօսքերէն՝ զոր ընտրութեան անմիջապէս ետքը գրած է իր ազգականներուն . « Ամենաբարին Աստուած, կ'ըսէ, որ կը խոնարհեցընէ և կը բարձրացընէ, հաճեցաւ իմ ոչնչութիւնս ամբառնալ՝ երկրիս վրայի ամենէն մեծ իշխանութեանը : Իր սուրբ կամքն օրհնեալ ըլլայ : Նոր պաշտամանս մեծ ծանրութիւնը կը զգամ . կ'իմանամ նաև իմ անբաւականութիւնս . պիտի ըսեմ նաև՝ բացարձակ անկարողութիւնս : Ահա և սովորեցիք առ Աստուած դիմելու մեծ պատճառով : Ազօթեցէք, և այլոց ալ ազօթել տուէք ինձի համար » :

Այս խօսքերն՝ որոց ամէն մէկը խոստովանութիւնք են տկարութեան և առ Աստուած վստահութեան, յայտարարք են նաև արժանաւորութեանը այնպիսի մեծ պաշտաման : և ժողովուրդը իրենց միաձայնութեամբն արդարացուցին ծիրանաւորաց ժողովոյն քուէն : « Իբր այս անունը ծանուցուեցաւ, կ'ըսէ Մաթիէ ծիրանաւոր, Կուիրինալի քահանայապետական արքունեաց մեծ պատգամէն, հոն սպասող ժողովրդեան վրայ զարմանալի տպաւորութիւն մը չըրաւ : Բայց երբ տեսան անոր ազնիւ և դեռ եւս արտասուաթոր սիրելի կերպարանքը, յորում կը նկատուէր իր զարմանքն և սրտին այլայլութիւնք, ամէնքն խոնարհեցան ընկան իր առջև, և ամենուն սրտին մէջ հաւասար փայլեցաւ յոյս և գոհութիւն : Այն աչքերն՝ որ քաղցր են իբրև զսէր, և ցանկալի իբրև զանմեղութիւն, և չբութեանցը վրայ փայլող անոյշ ժմիւտը՝ հայրական վստահութիւն մը կ'ազդէին յամենեւին » :

Նորընտիր քահանայապետին առաջին մտածութիւնն և սիրալիք խնամոցը առարկայ եղան աղքատք : Իրեն յատուկ արկղէն երեսուն հազար Ֆրանքի ողորմութիւն բաժնելով անոնց . մասնաւոր գումար մ'ալ որոշեց, որպէս զի չափաւոր արժէքով մը գրաւատուն գրուած ամէն նիւթերը իրենց տեսարցը դարձուին . Հռովմայ 53 ժողովրդապետութեանց իւրազանչութիւն մէջ մէկ մէկ աղքատ աղիկ օժտեց . և ուրիշ հազար օժիտ ալ իր տէրութեան ամեն գաւառներուն մէջ ցրուեց : Այս ամեն բարեգործութիւնք՝ յորդորամիտ ըրին ժողովուրդը մեծահանդէս և արտաքոյ կարգի ուրախութեամբ կատարել իր թագազրութեան հանդէսը ( յունիս 21 ) :

Մակայն ամենուն սրտին վրայ տարօրինակ ազդեցութիւն ընող զէպէն է .

լաւ նոյն տարւոյն յուլիս 14 թուակա-  
 նաւ արուած հրովարտակը , որով ա-  
 զատութիւն կը շնորհէր ամեն քաղա-  
 քական յանցաւորաց , հարիւրաւոր ըն-  
 տանեաց դիրկը գարձընելով իրենց սի-  
 բելի անձինքը : Յուլիսի 16ին հրատա-  
 րակուեցաւ այն թողութեան թուղթը .  
 և ժողովուրդը իր գոհութիւնն և երախ-  
 տագիտութիւնը յայտնելու համար՝ ե-  
 րեք օր երեք դիշեր մեծ ճրագավառու-  
 թեամբ լուսաւորեց բոլոր Հոռոմ քա-  
 ղաքը , և խուռն ամբոխիս դէպ 'ի հայ-  
 րապետական պալատը դիմելով՝ բար-  
 ձրաձայն աղաղակներով բռնադատեց  
 զքահանայապետն կրկին և կրկին օրհ-  
 նելու զինքը սիրող և իր առաքինու-  
 թեանց վրայ վրանաջող ժողովուրդը :  
 նոյն ամսոյն 19ին երբ Պիոս Թ Սրբոյն  
 վինկինտի պաւլայեցւոյ տոնախմբու-  
 թեան առթիւը անոր անուանը և պա-  
 տուոյն նուիրուած եկեղեցիէն իր պա-  
 լատը կը դառնար , խուճբ մը կտրիճ ե-  
 րիտասարդք , ազնուական ընտանեաց  
 զաւակք , քակեցին արձըկեցին անոր  
 կառքը քշող երիվարներն , և իրենք ա-  
 ուին տարին զինքը մինչև 'ի կուիրինալ :  
 նման ուրախութեան ցոյցեր ալ աւելի  
 մեծահանգէս կերպով կրկնուեցան յ'8  
 սեպտեմբերի և յ'8 նոյեմբերի . անանկ  
 որ բռնագատուեցաւ քահանայապետն՝  
 Հոռովմայ քաղաքապետին մէկ հրամա-  
 նագրովը խափանել զանոնք :

Այսպիսի ուրախութեանց արտաքին  
 նշանակք՝ որ Պիոսի Թ քահանայապե-  
 տութեան առաջին տարիներն՝ կամա-  
 կար յայտարարութիւնք և զեղմունք էին  
 ժողովրդեան սրտին և զգացմանցը , և  
 դրուատանք իրեն առաքելութեանցը ,  
 քիչ առնէն երախտագիտութեան ցոյ-  
 ցեր եղան՝ իրմէ սահմանուած և տրուած  
 բազմապատիկ բարեկարգութեանց հա-  
 մար . և որոնց նպատակ և վախճանն  
 էր՝ քահանայապետական աշխարհա-  
 կան տէրութեանը հպատակ դաւառնեք

օրինակ մ'ընծայել , և ստեղձ շատ ան-  
 դամ կրկնուած , և խիստ դիւրութեամբ  
 ընդունուած կարծիք մը , թէ մի և նոյն  
 անձի վրայ երկու իշխանութեանց միու-  
 թիւնը անկարելի ըլլայ : Քահանայա-  
 պետին փափաքն և ամէն օրուան մտա-  
 ծութիւնն էր բարւոյքել իր ժողովրդեան  
 նիւթական վիճակը , ու այն միջոցն ալ  
 սատար առնուլ յընդարձակել զթա-  
 գաւորութիւն Բրիտտոսի 'ի վերայ երկրի-  
 և նուիրական օրինակով մ'ալ խօսելով ,  
 նմանիլ արարչապետին յառաջագոյն  
 պատրաստելով զնիւթ , և ապա ազդել  
 'ի նա զլուծչ հոգևոր կենաց , ու 'ի Բրիտ-  
 տոս նուիրագործելով զմարդն , երկնից  
 սիրոյ հոգւով վառուած՝ մարդկութեան  
 նոր դարագլուխ մը երեցընել : — Բա-  
 ւական սեպտեմբ միայն քանի մը նշանա-  
 ւոր բարեկարգութեանց յիշատակու-  
 թիւնը :

Հասարակաց բարւոյն համար ամե-  
 նակարևոր խնդիր մըն է՝ մասնաւոր  
 քաղաքապետութեանց գործելու ազա-  
 տութիւնը , զուգընթանալով միշտ զըլ-  
 խաւոր և իշխող կառավարութեան հետ .  
 Պիոս Թ 1847 թուականին սկիզբէն  
 մասնաւոր յանձնաժողով մը կարգե-  
 ր , Ալդիէիի ծիրանաւորին նախագա-  
 հութեամբը , օգնական տալով իրեն  
 հոռովմէական ազնուականութեան նա-  
 խապատիւ անձինքը , որպէս զի անոնց  
 միաբան խորհրդակցութեամբը այս նը-  
 կատմամբ պէտք եղածը տնօրինուի և  
 'ի գործ դրուի : — Սուր և հեռատես  
 մտքովը լաւ ըմբռնած էր թէ ինչպէս  
 ամենէն աւելի գերագոյն առաքելու-  
 թիւնք , ինչպէս նաև մեծամեծ եղե-  
 րանց սկզբնաւորութիւնք՝ ժողովրդեան  
 մէջ տիրող գաղափարներու հետեանք  
 և արդիւնք են , և դաստիարակութեան  
 զանազանութեան . կընկատէր թէ ինչ-  
 պէս տպագրութիւնը վնասակար ու  
 սպառնալից իշխանութիւն մը կը դառ-  
 նար . ուստի փութաց իմաստուն կանո-

Նադրութեամբ չափաւորել զայն : Նոյն օրը տարւոյն մարտի 15 թուականաւ հրաւիրուած մը՝ քննիչ օրէնք մը կը հրատարակէր , որով կը միաբանէր գիտութեանց , ժամանակակից պատմութեան ու հասարակաց բարւոյն ծառայող յայտարարութեանց հետ այն սանձը՝ որ նախագուշակութիւն մը կրնար սեպուիլ անոնց վրիպանաց , մտորութեանց , հաւատոց և բարուց ապակաշխարհի : Իսկ դաստիարակութեան նկատմամբ կրնար ըսուիլ թէ Հոովմուրի իր մերձաւոր ժողովրդոցը վրայ նախանձեւու առիթ մը չունէր , և Պիոսի իննամբն մասնաւոր կերպով մը տարածեցան ազբատ և կարօտեալ մանկութեան կրթութեանը վրայ : Արդէն իր նախորդին ջանքով՝ գիշերային կոչուած դպրոցք՝ բարդաւաճ վիճակի մը մէջ էին . իսկ ինքն՝ անոնց ըրած անակնկալ և յաճախ այցելութեամբք՝ պատուեց այն բարերարական հաստատութիւններն , քաջալերեց անոնց վրայ աշխատողներն , և առատաձեռն նպաստիւք ապահովեց անոնց ապագայն : Մէծօրհնագի հոշականուն ծիրանաւորին նախագահութեամբն ուրիշ յանձնաժողով մ'ալ դրաւ՝ գթութեան ապաստանարան կոչուած տեղուանքը օգտակար կերպով իր տէրութեան սահմաններուն մէջ հաստատելու համար : Փափաքելով ճշմարիտ հայր մը երևնալ իր հպատակացը՝ բոլորովին նոր կարգադրութեամբ մը , 1847 ապրիլի 19 հրատարակուած շրջաբերականաւ մը սահմանեց որ իր տէրութեան ամեն գաւառներն մէյմէկ նշանաւոր անձիք ընտրեն մէջերնէն , որոնք քահանայապետին մօտ ըլլան 'ի Հոովմ' երեսփոխանք իրենց գաւառացը , և իրենց երկրի պէտքն հաղորդեն . սրբապան հայրապետն ալ կարենայ անոնց խորհրդովն օգտուիլ՝ ամեն մէկ գաւառաց բարեկարգութեան համար բըռ-

նուած միջոցներուն մէջ : Այստարակական իշխանութեան կանոնաւորելուն վերաբերեալ այս ամեն հոգերը՝ արդեւք մը չէին բուն քահանայապետական հոգոց . մասնաւոր թէ ժամանակաւորներն՝ Պիոսի մեծ ոգւոյն համար միջոց մըն էին՝ հոգեւորականաց գերագոյն վախճանին հասնելու . հոգւոյ գործի՝ մարմինն էր : Հաւատոց և ճշմարիտ բարեկարգութեան բարգաւաճման համար՝ 1846 նոյեմբեր 9ին հրատարակած շրջաբերականին մէջ իր դարուն բռնացած մտորութիւններն և յանցանքը յիշեցնելով , անոնց դարմանն ալ կը թելադրէր : 1846 նոյեմբերի 20 թուականաւ տրուած հայրապետական թղթով՝ յորելեան ներդրութեանց գանձը կը բանար հաւատացելոց : Իր հեռաւոր որդոցը կրած ցաւերուն վրայ լի գթով և սիրով , 1847 մարտի 25ին շրջաբերական թղթով բոլոր ուղղափառ եպիսկոպոսութեան կը յանձնէր զտարաբաղդիկն իւշանտա :

Այսպիսի բարեգործութեանց մէջ իր օրինակը ճարտարախօս էր քան զամենայն բան . բայց սիրտը՝ խօսելու պէտքն ալ կը զգար , և որուն սրտաշարժ օրինակ մ'ալ տուաւ 1847 տարւոյն առաջին օրերուն մէջ . Գրիստոսի աստուածայայտնութեւ ութօրէից վերջին օրն էր . և որ տարուէ տարի մեծահանդէս կը կատարուի Հոովմայ Ս . Անդրէաս Տէլլավալլէ կոչուած եկեղեցոյն մէջ , ամէն օր արևելեան այլ և այլ ազգաց արարողութեամբ մատուցուած ձայնաւոր պատարագը , և արևմտեան լեզուներով տրուած քարոզիւք : Ընդարձակ տաճարը լեցուած էր բազմութեամբ . վասն զի անուանին վէնգուրա պիտի քարոզէր այն օրը . և ահա յանակնկալս անձանթ կերպով , առանց իրեն սովորական թիկնապահաց ընկերակցութեանը՝ կը հասնէր

հօն սրբազան քահանայապետն : Այն յանկարծական երևումը՝ Աստուծոյ տաճարին մէջ իր սիրելի որդւոցը հետ խառնուած , զարմանք մը և ուրախութիւն ազդեց ամենուն . բոյց անկարելի է բացատրել անոնց սրտին իրաւացի յուզմունքը , արտասուաց հետ խառնուած հաճոյքն , երբ փոխանակ մեծանուն քարոզչին՝ տեսան բեմին վրայ զնոյն ինքն քահանայապետն՝ աստուածային խօսքը աւետարանելով :

Դ

Սակայն այս ամեն ծափածայն դուրսէնք և ուրախութեան ցոյցեր՝ 18 և 8 ին սկիզբները մէկէնսիմէկ լռեցին . և մրկայոյց ամպոց սպառնալիք սկըսան քահանայապետին չորս կողմը պատել պաշարել : Աստուծոյ ու Բիէմնդի տէրութեան մէջ իտալական անկախութեան խնդիրը և պատերազմը բացուելով , սրբազան քահանայապետն հարկ ու պարտք սեպեց լռեցընել իր մարտ 30 համառօտագրին՝ նոր և խռովասիրաց փափաքանացն յարմար տրուած քմահաճոյ մեկնութիւն մը , ու այն վախճանաւ ապրիլի 29 ին իմաստուն ատենախօսութիւն մ'ալ հրատարակեց , յորում իր բարձր աստիճանին և վիճակին արժանաւոր և մեծավայելուչ լեզուով մը կը պաշտպանէր իր նախկին մտածութիւնը՝ թոյլ տալով քահանայապետական զօրաց բանակին՝ իր տէրութեան սահմանազուլաններն բռնելու , որ և իցէ օտար յարձակում խափանելու համար . բայց արգելով անոնց՝ սահմանէն անդին անցնիլը , յորում եկեղեցւոյ համապիւռ որդւոց մէկ մասին յայտնի ֆնաս կը նկատէր , իւր այս մտածութիւնը՝ աւելի կերպով մը բացատրեց մայիսի առաջին օրը հրատարակուած ուրիշ գրուածքով մը : Լրագիրք և խռովարարք առիթ առնե-

լով այս խօսքերն , սկսան ժողովուրդը գրգռել իրեն դէմ : Բայց քահանայապետն՝ անդրդուելի արդարութեան և իրաւանց վրայ հաստատուած քաղաքականութեան մը մէջ , յորդորանաց թուղթ մը գրեց առ կայսրն Աստուծոյ (մայիս 3) , թախանձելով որ ետ կենայ պատերազմել . այնպիսի պատերազմէ մը՝ որուն հետեանք պիտի ըլլար ահաւոր աղէտք և թշուառութիւն իտալական ժողովուրդոց . և կը յեշեցընէր թէ կառավարութիւն մը՝ ոչ ազնուախոհ և ոչ բարեբաստիկ կ'ընէ զժողովուրդա՝ երբ միայն սրոյ վրայ յեցած ըլլայ :

Քահանայապետին պաշտօնէից ժողովը՝ որ յաշխարհականաց կազմուած էր , մէջերնին ունենալով զՄամիանի և զԿալլէզդի , յայտնեց իր գոհութիւնը և սրտին ուրախութիւնը այն թղթոյն մէջ ամփոփուած ազնուական և հայրենասէր զգածմանց համար . և Պիոս Թ միւս անգամ մ'ալ սկսաւ իր ժողովրդեան ծափահարութիւններն և սիրալիր ցոյցերն ընդունիլ . և երբ նոյն տարւոյն օգոստոսին՝ աւստրիական յաղթութեանց արհաւիրաց առջև՝ գրեթէ 'ի չիք դարձաւ իտալիա , միայն մեծ քահանայապետին ձայնն բարձրացաւ՝ Ֆէրրարա և Պոլոնիա քաղաքաց գրաւման դէմ բողոքելու :

Սակայն քիչ ատենէն իտալիոյ խռովարար թշնամեաց բարկութիւնն ու ատելութիւնը Պիոսի Թ դէմ դարձաւ : Բէլլէկրիւնոյ Ռոսսի անունով անուանի փաստաբան մը իր պաշտօնէից ժողովոյն գլուխ ընտրեց էր , և զոր խռովասէրք իրենց ատելութեանն նպատակ և նշաւակ ըրին՝ իրենց դարանագործ յուզմունքը սանձելու և խափանելու ցուցըցած հաստատուն արիութեանը համար : Նոյեմբերի 15 էր (1848) . և նոյն օրը խորհրդարաններն պիտի բացուէին . Հռովմայ մէջ մեծ յուզմունք

մը կը տիրէր . Ռոսսի պաշտօնէին բարեկամներն փութացեր ծանուցեր էին իւրեն՝ ինքզինքը վտանգի մէջ դնելէն զգուշանալու . սակայն նա վտանգի և մահուան ձայներուն առջև չհահարեց . ու նախամեծար սեպելով պարտուց կատարումը, ժողովրդեան նախատալից և սպառնական ձայներուն մէջէն անցաւ գնաց՝ խորհրդարանը մտնելու : Երբ սանդուղներէն վեր կ'ելլէր, դաշոյնի մահառիթ հարուած մը զգաց, ու քանի մը քայլ առնելէն ետքը՝ ընկաւ դիակնացեալ : Հօն գըտնուողներուն երեսին վրայ, որոնք գրեթէ ամէնքը դաւաճանաց խմբին կը վերաբերէին, ուրախութեան վայրագ ժմիտ մը փայլեցաւ . խորհրդարանը մէկէնիմէկ նիստը դադրեցուց . և արիւն, արբու սիկարեանց խմբեր բոլոր նոյն օրը և գիշերը իրենց ուրախութեան քստմնելի աղաղակներով լեցուցին Հրուովմայ փողոցները :

Դաւաճանաց գլուխ կեցողներն, որոնց առաջնորդ էր Սդէրպինի, Ռոսսիի սպանութիւնն և անոր Պիոսի Թարտին վրայ ազդած տազնապը և քաղաքացւոց արհաւիրքը յարմար առիթ և ժամանակ մը սեպեցին՝ քահանայապետին ձեռքէն կառավարութիւնը յափըշտակելու . և Հասարակաց ապահովութեան առժամանակեայ յանձնաժողով մը կազմեցին : Քաղաքին գլխաւոր բերդին հրամանատարն և իրեն զինուորը՝ վատութեամբ գլուխ ծռեցին, իրենց զէնքնու բազուկն նուիրելով յանձնաժողովոյն . և որ մտածեց մէկէնիմէկ հասարակապետական անձինքներէ կազմեալ պաշտօնէից խորհրդարան մը կազմել, առաջարկել զայն քահանայապետին, և բռնադատելով զնա յընդունել, իրեւ իր կողմանէ և հաճութեամբն եղած ընտրութիւն մը հրատարակել : Նենգաւոր հնարք մը և մտածութիւն էր այն խռովարարաց կողմանէ . եթէ

ընդունէր, թագաւորական իշխանութիւնն արհամարհուած էր այնուհետեւ . իսկ եթէ մերժէր, պատրաստուած էին ինչուան անոր նուիրական անձին վրայ իրենց սեղանազերծ ձեռքն երկընցընել :

Այսպիսի խորհուրդ մը 'ի գործ դրնելու համար՝ նոյեմբերի 16ին բազմութեան մեծ ամբոխ մը՝ զինուորաց հետ միաբանելով, ժողովրդեան կողուած հրապարակը գումարուեցան, և անկէ դէպ 'ի կուիրինալ՝ քահանայապետական արքունիքն յառաջ խաղալ, դաւաճանաց գլխաւորներուն առաջնորդութեամբ : Պահապան զօրաց կողմանէ դռները մէկէնիմէկ փակուեցան անոնց դէմ, թոյլ տալով միայն որ պատգամաւորութիւն մը կարող ըլլայ ներս մտնել : Անոնք յայտնեցին քահանայապետին՝ ժողովրդեան փափաքը, հասարակապետական պաշտօնէից ընտրութիւնը իր հաճութեամբը վաւերացընելու : Սրբազանն յայտնի տեսնելով իրեն դէմ լարուած թակարդը, պատգամաւորաց և անոնց գլխաւորին կալլէզդիի հասկըցուց իր կողմանէ բացարձակ մերժումը . բայց ետքը խորհրդածելով՝ լաւ սեպեց երկրորդ օրուան ձգել տալու որոշակի պատասխանը : Կալլէզդի ներկայացաւ ժողովրդեան . իմացուց քահանայապետին որոյմունքը՝ երկրորդ օրուան համար . բայց ժողովրդը զբռնելու խօսքերով : Այն ատեն ամէնքը զէնքի դիմեցին, և մտնեցին կատաղութեամբ պաշարելով զկուիրինալ՝ մտքերնին դրած էին յարձակմամբ առնուլ զայն . որովհետեւ զուիցերացի պահապան գունդն՝ ամէն դռներն զգուշութեամբ բռնած էր : Զուիցերացւոց կողմանէ ժողովրդեան ամբոխը ցրուելու համար արձգուած քանի մը հրացանի հարուածներն ալ աւելի զիրենք կատղեցուց . պալատին մէկ կողմնական դրանը կրակ տուին, և չորս կողմի

տներուն տանեաց վրայ ելլելով, կուրի-  
րինալի պատուհաններէն ներս հրա-  
ցաններ կը պարպէին : Անոնց մէկ հա-  
րուածովը՝ ընկաւ մեռաւ, Գեր . Բալմա  
քահանայապետական . ընտանի պաշ-  
տօնակալներէն մէկին : Ոմանք ալ սկսան  
թնդանօթներ քաշկըտել տանիլ զէպ  
'ի պալատին մեծ դուռը, զանիկոյ հի-  
մնայատակ տապալելու համար :

Այն յուզման և խռովութեան լուրը  
փայլական պէս տարածուելով, բոլոր  
տէրութեանց ղեսպանք և երեսփո-  
խոսք դիմեր էին 'ի կուրիինալ, սրբա-  
զանին նուիրական անձը պաշտպանե-  
լու համար . և վերահաս վտանգը տես-  
նելով՝ միաբան խորհուրդ տուեր էին՝  
բռնութեան առջի տեղիք տալ : Զիջաւ  
քահանայապետը, չուզելով որ նոր ա-  
րինհնգութիւն մ'ալ ըլլայ . բայց խռով-  
արարաց յուզմանց և եղած անկար-  
գութեանց դէմ բարձրացընելով բողո-  
քոյ ձայնը :

Ե

Այս ահաւոր ապստամբութեան եր-  
կրորդ օրը խռովարարը նորէն ուրք ել-  
նելով, միացուցին հեաներին ժողովրդ-  
դեան ամբոխ մը, և սկսան պահանջել  
որ զուիցերացի զօրաց խուճբը արծը-  
կուի . և բռնադատեցին զքահանայա-  
պետն որ զրկէ զանոնք իրմէ հեռու 'ի  
վատիկան : Անոնց տեղ քաղաքային  
պահապան գունդը մտաւ 'ի կուրիի-  
նալ, և ինչուան Սրբազանին բնակու-  
թեան նախասեննակները, լրտեսելու  
և քննելու անոր ամէն մէկ գործը : Քա-  
հանայապետն՝ որ այնպիսի յեղափո-  
խական . . . գրգռութեան մը առջև իր  
արիութիւնը չէր կորուսեր, տեսնելով  
ինքզինքը իշխանութենէ զրկուած, ա-  
պրտամբ և խռովարար պաշտօնէից  
մէջ, հայրագութի խանդաղատանօք ի-

մացուց ծիրանաւորաց որ ինքզինքնին  
վտանգէն փրկելու նային : Ուղղափառ  
տէրութեանց ղեսպանք՝ քահանայա-  
պետական մեծ պաշտօնեայ ծիրանա-  
ւորին քով ժողովուելով, խոհականա-  
գոյն սեպեցին որ Սրբազանն ապա-  
հով երկիր մը ձգուի : Պիտո թ անստոյգ  
և տարակուսի մէջ էր . լի գթով և խան-  
դաղատանօք առ ժողովուրդն, — թէ-  
պէտ իր խնամոցը և սիրոյն ապե-  
րախտ, — կը վախնար որ չըլլայ թէ  
հեռանալովը՝ աւելի համարձակութիւն  
գտնէ անօրէնութիւնն ու ամբարշտու-  
թիւնը . միւս կողմանէ ալ յայտնապէս  
կը տեսնէր որ իր կենացը անխուսա-  
փելի վտանգ սպառնացող նոր խռովու-  
թիւն մը կը պատրաստուէր :

Այսպիսի անստուգութեան մը մէջ կը  
տատանէր, երբ նոյեմբերի 19ին Գաղ-  
ղիոյ վալանս քաղաքին եպիսկոպոսէն  
նամակ մը հասաւ առ Քահանայա-  
պետն, պզտի արծաթեայ սրբատփով  
մը՝ որուն մէջ իր նախորդն Պիտո Զ սուրբ  
հաղորդութիւնը գնելով՝ վզէն կախէր,  
և անով երկնաւոր ոյժ և զօրութիւն մը  
զգալով՝ անվտանգ հասեր էր մինչև 'ի  
վալէնցա . « Ժառանգ անուան , —  
այսպէս կը գրէր եպիսկոպոսն, — Ժա-  
ռանգ դահուն , առաքինութեանց , ա-  
րիութեան և գրեթէ նաև վշտաց մե-  
ծին Պիտի Զ , մասնաւոր սիրով մը պի-  
տի ընդունիս անշուշտ՝ այս աղքատին ,  
բայց պատուական ընծայն : Յոյս ունիմ՝  
թէ իր նախկին պէտքը չունենայ . սա-  
կայն ո՛վ կրնայ խելամուտ ըլլալ խոր-  
հրդոցն Աստուծոյ , ինչ որ իր նախա-  
խնամութեամբը պատրաստեր է 'ի փորձ  
և 'ի վարձ քու Սրբութեանդ » : Այս  
նամակն և այս ընծայն՝ լուսոյ նշոյլ մը ,  
մանաւանդ թէ երկնազդեցիկ յայսնու-  
թիւն մը եղաւ Պիտի թ համար . տե-  
սաւ իր առջև համանման մեծ նախոր-  
դացը ճամբան , և պատրաստեցաւ յաք-  
սոր, անսալով ուղղափառ տէրութեանց

երեսփոխաններուն խորհրդոցը և թախանձանաց :

Սակայն փախուստն ալ դիւրին չէր . վասն զի Կոնիքինալի ու քաղաքին զբարանց քով կը հսկէին պահապանք : Բայց կը հսկէր նաև աստուածային նախախնամող և զթալիր աչքը՝ թշնամեացը որոգայթներէն և սպառնալիքէն փրկեալու այն մեծ ֆահանայապետը՝ զոր օհմանած էր առ մեծամեծս , յօգուտ և ի փառս Եկեղեցւոյ : Պաւլոսայի լիազոր պաշտօնեայ Սիմուր կոմսը յանձն առաւ՝ Սրբապատն անոնց ձեռքէն ապրեցնելու պատիւը . և այս մեծ և դժուարին գործը պիտի կատարուէր նոյեմբերի 24ին իրիկունը :

Նոյն օրը կէսօրուքէն ետքը ժամը հինգին՝ յառաջագոյն տնօրինուած կարգադրութեանց համեմատ , Գաղղիոյ դեսպան Տարբուր դուքսը Կոնիքինալ եկաւ , ներկայ դատուելու քահանայապետին ճամբայ ելլելուն , և պահապանաց արթնութիւնը զբաղեցնելու : Սրբազանն առանձնացաւ իր սենեակը , տեսաւ զիմացը պատրաստուած սոսկական քահանայի մը սևագոյն զգեստներն , աշուրներն երկինք վերցուց , արտասուալից կաթիլք երեցան երեսին վրայ . խոնարհեցաւ ընկաւ յերկիր , ու անկողնոյն քով ծնկան վրայ դարձով ձեռուրներովն ծածկեց զէմբը , ու քանի մը վայրկեան՝ լուռ և խորհրդագգած աղօթից պարապեցաւ : Յետոյ ոտքի վրայ ելլելով , հանեց վզէն հայրապետական ծիրանեգոյն ուրարը , համբուրեց , ու ծալեց իր ձեռքովը . և հաւատարիմ պաշտօնէի մը օգնութեամբը հազաւ սեաւ զգեստներն , ու միայնակ՝ նոյն անձին ընկերակցութեամբը , ծածուկ ու գաղտնի դռներէ անցնելով՝ ինջաւ ՚ի գաւիթն , ուր հասարակ կաօք մը կը սպասէր . մտաւ հօն , ու առանց զինուորաց մէկուն իմացնելուն՝ անցաւ գնաց մէջերնէն :

Սիմուր կոմսին հետ խօսք դրած էին որ Սրբոյն Պետրոսի և Մարկելինոսի կոչուած եկեղեցւոյն քով զիրար գրտնեն . հօն էր կոմսն , սպասելով Սրբազանին : Հասաւ ֆահանայապետն ալ սև զգեստներուն մէջ պլլուած , ու կառքին մէջ իրեն ընկեր եղող վերը յիշուած աշխարհիկ պաշտօնէին ձեռքը սեղմելով , մտաւ կոմսին կառքը , ու ճամբանին շարունակեցին դէպ ՚ի Լատերան : Որպիսի յուզմունք Սրբազանին սրտին համար այն մայր եկեղեցւոյն առջևէն անցնելուն ատեն , ուր դեռ քանի մը տարի յառաջ՝ անթիւ բաղմութեան ազազակներով և մեծահանդէս ուրախութեան ցոյցերով անոր ժառանգութիւնն առևեր էր : Իսկ հիմա զիշերուան մթութեան մէջ , զինքը չբնապատող տխուր լուծեան , փախտեան առանձնութեանը մէջ՝ կը տեսնէ միայն իր առջևը կանգուն բարձրացած՝ անշարժ և անխօս կոթող մը , իբրև սպառնալից ստուեր՝ մը հօն դրուած՝ ՚ի պաշտպանութիւն տաճարին Աստուծոյ . և որ իրեն անբարբառ լուծեանը մէջն ալ կարծես թէ քաջալերիչ ձայնով մը կը խրախուսէր զհալածեալ և զփախտեայ ֆահանայապետն . « Գնա՛ , կ'ըսէր , ո՛վ մեծք . վասն զի ամենատես փրկողին աչքը քեզի պահապան է . քու հաւատքդ՝ զիս վեր բռնող պատուանդանէն աւելի հաստատուն և անտեղիտալի է » :

Կառքը հասաւ Լատերանեան դուռը : Պահանորդք հարցուցին թէ Ո՛վ է : — Պաւլոսայի գլխաւոր պաշտօնեայնեմ , պատասխանեց Սիմուր , ու Ալպանոյ կ'երթամ » : Եւ անցի հրամանը տրուեցաւ : Սրբազանն Հռովմայ զրտնէն դուրս ելաւ . դարձուց մէյմ՝ ալ աշուրները իր սիրելի քաղքին վրայ , հառաչեց , ու տխուր և լռին՝ շարունակեց կառքն իր ճամբան դէպ ՚ի այլայնան բլուրներն : Արիչիա գեղն անցնելէն ետքը՝ Նէապոլիս տանող արքունական ու

դւոյն բերանը կանկ առաւ կտորք . և կոմսը քահանայապետին հետ վար ինչաւ իր ընտանեացն սպասելու համար : Հաղիւ ինչեր էին , տեսան զիրենք պահապան զինուորներէն հինգ հոգի , և ովք ըլլալին ուզեցին իմանալ . « Սփառուր կոմսն եմ , ըսաւ , ու Պաւլիբայի պաշտօնեայ , որ Նէապոլիս կ'երթամ՝ թագաւորիս վերաբերեալ գործերուն համար . կը սպասեմ ընտանիքս բերող կտօքին » : Պահապաններն ըսին թէ որչափ ալ ճամբաները ապահով էին , սակայն սիրով յանձն կ'առնուն իրենց ընկերանալ , ամեն վտանգէ ազատ ըլլալու համար : Կոմսը շնորհակալ եղաւ : Քահանայապետն նոյն միջոցին փոսի մը քով ցցապատնիչին կ'սթընած՝ կը սպասէր հանդարտ և անխռով :

Վերջապէս հասաւ դեսպանին կինը իր որդուովը և անոր դաստիարակով . ու ճամբանին շարունակելով ժամը հինգին ատեններն Դերրաչինա հասան , ու կէս ժամէն ետքը՝ անվտանգ սահմանէն անդին անցեր էին : Նէապոլիս սահմանազուլտը մտած ատեննին , Սրբազան քահանայապետը բարձրաձայն մաղթանոք շնորհակալ եղաւ Աստուծոյ . ու երբ իրեն կենաց դարանակալք ամեն արթնութիւն և փոյթ կը ցուցնէին զինքը ձեռքերնէն չփախցընելու , ինքն արդէն իսկ խալըսած էր անոնց նենգամիտ խորհուրդներէն : Վասն զի Տարբուր Գաղղիոյ դեսպանը՝ Քահանայապետին սենեակը մնաց , մինչև որ նա բաւական հեռացաւ քաղքէն : Դեսպանին ելլելէն ետքը՝ քահանայ մը հօն մտաւ թղթոց ծրար մը թեկն տակ , իբրու թէ Սրբազանին առաջարկելու զանոք . ետքն ալ ուրիշ մը՝ հետը աղօթելու . ու սովորական ատենին ընթրիքը տանելով , ըսին թէ Սրբազանը կ'ուզէ հանգչիլ . և այն պատրուակաւ նա

խտանեկին մէջ եղող պահապան զօրքը ճամբայ զրին :

Քահանայապետն երբ կայէգայի նաւահանդիստն հասաւ , իրեն ընդ առաջ եկաւ Անդոնէլլի ծիրանաւորն աշխարհիկ ձևով , ու Սպանիոյ դեսպանատան քարտուղար Առնոյ ասպետը . որոնք ընկերացան Սրբազանին մինչև յամալաստանն Կիլիկոնի , ուր կառքէն վար իջնելով հանգչեցան : Կերակրէն ետքը Քահանայապետը թուղթ մը գրեց առ Փերդինանդ թագաւորն Նէապոլիս , ծանուցանելով իր երկիրներուն սահմանաց մէջ դռնուիլը , և թէ կ'ուղէր կայէգա երթալ : Սփառուր այն թուղթը Նէապոլիս տարաւ . իսկ Սրբազանն՝ Անդոնէլլի ծիրանաւորին , Առնոյ ասպետին և Սփառուրի ընտանեաց հետ կայէգա գնաց : Երբ ամբողջն դուռն հասան ու իրենց անցադիրերն ցցուցին , պատուէր ընդունեցան հրամանատարին ներկայանալու . զիչերն ալ խեղճ պանդոկի մը մէջ բռնադատուեցան անցընել :

Սփառուր կոմսը իրիկուան տանին Նէապոլիս հասնելով , մէկէն քահանայապետական նուիրակին գնաց , անկէ ալ երկուքը մէկտեղ առ Փերդինանդ թագաւոր . որ երբ Սրբազանին գրած թուղթը կարդաց , ուրախութեան և ցաւոց արտասուօք մէկէն հրաման տուաւ որ բոլոր թագաւորական ընտանիքն ճամբայ ելլէ : Հետեւեալ միջօրէին հասան ՚ի կայէգա , ուր իրենցմէ քիչ առաջ արքունի պալատը փոխադրուեր էր Պիոս թ : Խոնարհեցան ընկան իր առջևը , արքունական դանձ , բնակութիւն և պաշտպանութիւն իրեն նուիրելով : Հօն հասան քիչ ատենէն նաև բազմաթիւ ծիրանաւորք , և ամէն աերութեանց դեսպանները :

Կը շարունակուի :